տեսակէտից ուսումնարանն ու ընտանիքը միշտ ձեռք ձեռքի են գնում: Նրանք զարգացնում են սէրը դէպի իւրայինները, դէպի հանրութիւնը, դէպի թագաւորն ու հայրենիքը: Այժմ կառավարութիւնը ոչ մի ջանք չի խնայում հնար եղածին չափ շուտով իւրացնելու եւրոպական կրթութեան եղանակը, եւ այդ պատճառով էլ արդի դպրոցական կազմը ամբողջապէս արեւմտեան է: Մեծ է մանաւանդ ամերիկացիների խաղացած դերը այդ գործում: Այժմ ամենախուլ անկիւններում կան նախնական դպրոցներ: Եւ դպրոցը պարտադիր է ամենքի, անխտիր թէ տղայի ու թէ աղջկայ համար: Ճապոնը անգրագէտ չունի: Գիւղական ու քաղաքային դպրոցների հոգսը ինքը գիւղը կամ քաղաքն է քաշում:

Կրօն ընաւ չեն անցնում. դրա փոխարէն կան բարոյագիտութեան դասեր: Մասնաւորապէս շեշտած են բնական գիտութիւնները, որոնց անցնելու եղանակն էլ բացառիկ կերպով լաւ է ու գործնական. շատ սովորական բան է դպրոցական այցերն ու պտոյտները ուսուցիչների առաջնորդութեամբ իրանց հայրենիքի ու բնութեան հետ մօտիկ ծանօթանալու համար: Դպրոցը տալիս է եւ երկրագործական ծանօթութիւններ, որին զոյգ է ընթանում գործնական վարժութիւնը՝ յատուկ այդ նպատակով շինւած տիպար ագարակներում: Մարմնամարզութիւնն ու ֆիզիկական խաղերը պարտադիր են բոլոր դպրոցներում եւ շատ են գոված: Ընդհանրապէս դպրոցներում տիրող ոգին աւելի մտերմական է ու ընկերական. ուսուցիչը աշակերտների վերաբերմամբ մեծ ընկերոջ դեր է խաղում. պատիժ ասած բանը համարեա թէ չկայ:

Քաղաքներում կան ուսուցչական երկսեռ վարժարաններ: Շատ բարձր են եւ օրինակելի նրանց մասնագիտական տեխնիկ